ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՍԻԱՅԻ, ԱՖՐԻԿԱՅԻ ՈՒ ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հոբելյանական տարում Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության 50-ամյակին նվիրված միջազգային դիտական կոնֆերանսների և սեսիաների մեջ ս/թ սեպտեմբերի 19—22-ը Բաքվում կայացած այս կոնֆերանսը ունի իր ուրույն նշանակությունը։ Այն հրավիրվել էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Ասիայի ու Աֆրիկայի երկրների համերաշխության սովետական կոմիտեի կողմից։ Այսպիսով կոնֆերանսի մասնակիցները ներկայացնում էին ոչ միայն գիտական հասարակայնությունը, այլև քաղաքական, կուսակցական շրջանները։ Ինտերնացիոնալ տրադիցիաներով հարուստ սովետական Արևելքի այս քաղաքը հանդիսացել էր Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի վայրը, որտեղ 47 տարի առաջ՝ 1920 թ. սեպտեմբերին հավաքվել էին ազատագրված Իուլաստանի և պայքարի ելած Ասիայի ավելի քան 20 ժողովուրդների տարբեր խավերի և քաղաքական ուղղությունների ներկայացուցիչներ։ Նրանց միավորել էին Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության հետևանքով ծավալված հակաիմպերիալիստական պայքարի նպատակները։ Սակայն ժամանակները այնպիսին էին, որ համագումարի աշխատանքներին մասնակցելու անհաջող փորձեր էին կատարում նույնիսկ արյունռուշտ, համաշխարհային ավանտյուրիստ ու իմպերիալիզմի լակեյ էնվեր փաշայի նման անձնավորություններ։ Տարիները, պայքարի բազմամյա փորձը էլ ավելի պարզորոշ դարձրին պրոգրեսիվ ուժերի և նրանց հակառակորդների դիրքերը և Ասիայի, Աֆրիկայի ու Լատինական Ամերիկայի ժողովուրդների ներկայացուցիչները Բաքվի 1967 թ. սեպտեմբերին կայացած կոնֆերանսում ամուր կերպով կանգնած էին հակաիմպերիալիստական, դեմոկրատական, խաղաղասիրական դիրքերի վրա։ Ավելի քան քառասուն ժողովուրդների ներկայացուցիչներ միահամուռ կերպով նշեցին Հոկտեմբերյան հեղափոխության անգնահատելի դերը ազատագրական, հակաիմպերիալիստական պայքարի, համաշխարհային առաջընթացի ու առանձին երկրների և ժողովուրդների անկախության և վերածնության համընդհանուր շարժման մեջ, որի հետևանքով մոտ 70 երկրներ ու ժողովուրդներ նվաճեցին իրենց ազգային անկախությունը։ Աշխարհի չորս մայրցամաքների՝ Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի և Եվրոպայի երկրների ու ժողովուրդների անունից ելույթներ ունեցան՝ ՍՍՀՄ-ում Հարավային Վիետնամի ազատագրման Ազգային ճակատի մշտական ներկայացուցչության ղեկավար Դանդ Քուանգ Մինը, Հնդկաստանի կոմունիստական կուսակցության Ազգային խորհրդի և կենտգործկոմի անդամ Սարդիսայը, Միացյալ Արաբական Հանրապետության խաղաղության կողմնակիցների կոմիտեի նախագահ Խալեդ Մոհի էդ-Դինը, Մարոկկոյի կոմկուսակցության գլխավոր քարտուղար Ալի Յաթան, Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության կազմակերպության գլխավոր քարտուղար Յուսեֆ Էս-Սիբաին, Մոզամբիկի ազատագրման պայքարի ազգային ճակատի քարտուղար Մարսելինո Դոս-Սանտոսը, Սոմալիի կանանց կոմիտեի նախագահ Ֆաթմա Հաջ Օսմանը, Բրազիլիայի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ Ն. Սոդրեն, Արգենտինայի, Վենեսուելայի, Ալժիրի, Սիրիայի, Հարավ-Աֆրիկյան Հանրապետության, Մոնղոլիայի, Իսրայելի, Բուլղարիայի, Լեհաստանի, Չեխոսլովակիայի և բազմաթիվ այլ երկրների ներկայացուցիչներ։ Ավելի քան 50 զեկուցողներից և ելույթ ունեցողներից 25-ը ներկայացնում էին զարգացող կամ ազատագրման համար պայքարող ժողովուրդներին։ Հետաքրքիր է նշել, որ ամենից ավելի ակտիվ էին իրենց զարթոնքն ապրող աֆրիկական երկրների ներկայացուցիչները (10 ելույթ), ապա Ասիայի (7), Եվրոպայի (5) և Լատինական Ամերիկայի (3)։ Կոնֆերանսի մասնակիցներին հղած իրենց ողջույնի ուղերձում ընկ. ընկ. Լ. Բրեժնևը, Ն. Պոդգորնին և Ա. Կոսիգինը նշելով Հոկտեմբերից հետո սովետական ժողովուրդների ձեռք բերած հաղթանակները տնտեսական, քաղաքական և կուլտուրական ասպարեզներում, ցույց տալով դրանց նշանակությունը Արևելքի ժողովուրդների պատմական բախտի վրա, ընդգծեցին հատկապես, որ «աշխարհում չկան ուժեր, որոնք կարողանային կասեցնել

Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդների առաջընթացը դեպի իրենց փայլուն ապագան։ Դրա երաշխիքն է հանդիսանում ազգային-ազատագրական շարժման ամրապնդվող միասնությունը համաշխարհային սոցիալիզմի ուժերի և միջազգային բանվոր դասակարգի պայքարի հետ»։ Այս նշանաբանի տակ ընթացան կոնֆերանսի աշխատանքները։

Իր բացման խոսքում կազմակերպական կոմիտեի նախագահ, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Վ. Ցու. Ախունդովը խոսեց Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո անցած 50 տարիների մասին։ Նա նշեց, որ սովետական Արևելքի հանրապետությունները դարձել են առաջավոր արդյունաբերական երկրներ, որոնց համախառն արտադրանքը գերազանցել է ոչ միայն հարևան Իրանի, Պակիստանի կամ Թուրքիայի, այլև հաճախ կապիտալիստական Արևմուտքի մի շարք երկրների արդյունաբերության համապատասխան ցուցանիշները։ Ամփոփելով ազգային-ազատագրական պայքարի հաջողությունները, նա ասաց, որ իմպերիալիստական պետությունների և առաջին հերթին Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքականության ու իրենց ազդեցության տակ եղած ազատագրված երկրներում, նրանց ջանքերի հետևանքով սկսված պատերազմական գործողությունները սպառնում են ընդհանուր խաղաղությանը։ Վիետնամի, Անգոլայի, Արաբական հարավի, Ռոդեզիայի, Հարավ-Աֆրիկյան հանրապետության, Պորտուգալական Գվինեայի և Մերձավոր արևելքի մի շարք ժողովուրդներ ստիպված են տարիներ շարունակ զենքը ձեռքերին կռվել իրենց ազատագրման կամ անկախության համար։ Այդ ժողովուրդները կարիք ունեն համերաշխության և աջակցության, որը ցույց են տալիս սոցիալիստական երկրները։ Վերջում նա հույս հայտնեց, որ կոնֆերանսը իր ավանդը կմուծի ազգային-ազատագրական շարժման կարևոր պրոբլեմների մշակման և նրա պրակտիկ փորձի ուսումնասիրման գործում։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի նախագահության անունից ողջույնի ճառով հանդես եկավ փոխ-պրեզիդենտ ակադեմիկոս Ա. Մ. Ռումյանցևը։ Նա կանգ առավ սոցիալիստական շինարարության և ազգային-ազատագրական պայքարի փորձի գիտական ամփոփման հարցերի վրա։ Հոկտեմբերյան հեղափոխությունը անսովոր կերպով ընդլայնեց մարդկության պատմական մտահորիզոնը և դրա հետ մեկտեղ նոր հորիզոններ բացեց գիտական մտքի համար։ Սոցիալիզմի երկրներում վերափոխվում է ոչ միայն էկոնոմիկան, այլև մարդկանց բոլոր բարդ սոցիալական հարաբերությունները և դրանով իսկ ձևավորում է նոր տիպի մարդուն։ Փոխհարաբերությունները սոցիալիստական ազգերի միջև ծառայում են ժողովուրդների հետագա մերձեցմանը, նրանց տնտեսության և մշակույթի հետագա զարգացմանը։ Իսկ ազգային-ազատագրական պայքարի փորձը պահանջում է հաշվի առնել շարժման օրինաչափություններում առանձնահատուկը և ընդհանուրը ու նրանց դիալեկտիկական միասնությունը։

Կոնֆերանսի մյուս կազմակերպիչ՝ Ասիայի և Աֆրիկայի համերաշխության սովետական կոմիտեի անունից, նախագահի տեղակալ, լենինյան մրցանակի դափնեկիր, գրող Ջինգիզ Այթմատովը նշեց, որ համերաշխության միջազգային շարժումը Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների համագործակցության առավել ընդլայնված և գործուն ձևերից մեկն է։ Իսկ սովետական հասարակայնության համար նա հանդիսանում է ազգային-ազատագրական հեղափոխությունների հաղթանակին աջակցելու լավագույն միջոցներից մեկը։ Այս խնդրում բարոյա-քաղաքական ակտիվ օգնության հետ մեկտեղ, սովետական մարդիկ իրենց ինտերնացիոնալ պարտքն են համարում ըստ ամենայնի պրակտիկ օգնություն ցույց տալ մարտնչող ժողովուրդներին։ Սովետական Միությունը տարեցտարի ընդլայնում է տնտեսական, կուլտուրական, գիտատեխնիկական համագործակցությունը Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրների հետ, նրանց օգնում է զաղութային ճնշման ծանր հետևանքները վերացնելու գործում։ Արդեն 34 զարգացող երկրների հետ գոյություն ունեն տնտեսական և կուլտուրական սերտ կապեր։ Այդ նպատակի համար հատկացված համարյա 4 միլիարդ ռուբլին ծախսվում է՝ ելնելով օգնություն ստացող երկրների կենսական շահերից, այսինքն՝ 70%-ը հատկացվում է արդյունաբերության, 9%՝ տրանսպորտի և կապի, 13%՝ կուլտուրայի ու կրթության և 7%՝ գյուղատնտեսության զարգացմանը։ Տվյալների համաձայն, Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների անշահախնդիր օգնությունը պետք է ապահովի ծանր արդյունաբերության, այսինքն տնտեսական անկախության բազայի ստեղծումը։

Հիմնական մի շարք զեկուցումներով հանդես եկան Սովետական Միության ականավոր գիտնականներ։ Ակադեմիկոս Ե. Մ. Ժուկովի զեկուցումը նվիրված էր «Մեծ հոկտեմբերը և ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը» թեմային։ Զեկուցողը հատկապես կանգ առավ Հոկտեմբերյան հեղափոխության անմիջական ազդեցության վրա և նշեց, որ Հոկտեմբերը տապալեց

կապիտալիստական սիստեմի մոնոպոլ տիրապետությունը և մեծ ճեղք բացեց գաղութային իրավազրկության ու շահագործման այն բանտային վանդակում, որտեղ կալանքի տակ հեծում էին բոլոր երեք մայրցամաքների՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի ժողովուրդները։ Պատմության հիսունամյա փորձը ցույց տվեց, որ Հոկտեմբերի բացած նոր դարաշրջանը դարձավ ազգային ու սոցիալական ճնշման բոլոր ձևերից ժողովուրդներին փրկելու նախակարապետը։ Զեկուցողը ընդգծեց, որ նոր միջազգային պայմանների լավագույն օգտագործման կարևոր գործոններից մեկը՝ դա գաղութային ու կախյալ երկրների միլիոնավոր ժողովուրդների մարտական համագործակցությունն ու դաշինքն է գլխավոր հեղափոխական ուժի՝ միջազգային բանվոր դասակարգի հետ։ Գաղութային սիստեմի ճգնաժամի սկզբնական շրջանի բնորոշ գիծն էր մասսայական հակաիմպերիալիստական ելույթների մի ամբողջ լտապ։ Երկրորդ համաշխարհային պատերազմում ֆաշիզմի ջախջախումից հետո, այդ ճգնաժամը ավելի խորացավ, այն ընդգրկեց նորանոր երկրների ու ժողովուրդների և ամենուրեք հանգեցրեց գաղութային սիստեմի փլուզման։ Առանձնապես տպավորիչ փոփոխություններ տեղի ունեցան աֆրիկյան մայրցամաքում, որը մինչև վերջերս ուներ գաղութակալության «արգելավայրի» մոայլ համբավ։ Վերլուծելով գաղութատիրության սիստեմի կործանման պրոցեսը, զեկուցողը գալիս է այն եզրակացության, որ ազատագրական շարժումը շատ երկրներում, իր մյուս կողմով համընկնում է Արևելքի որոշ ժողովուրդների, որպես ազգ ձևավորվելու պրոցեսի հետ։ Ազգային անկախության հաստատումը և ամրապնդումը այդպիսով նախորդում է սոցիալական ազատագրությանը ու հանդիսանում է նրա անհրաժեշտ նախադրյալը։

Այնուհետև ակադեմիկոս Ժուկովը նշում է, որ հանուն անկախության զինված պայքարը, ոչ միայն չի հակասում պետությունների խաղաղ գոյակցության սկզբունքին, այլ ընդհակառակը, հաստատում է նրա կենսական անհրաժեշտությունը։ Տարբեր սոցիալական կարգեր ունեցող պետությունների խաղաղ գոյակցությունը չի բացառում ճնշված ժողովուրդների զինված պայքարը և չի խոչընդոտում նրան, որովհետև այդ սկզբունքը չի նշանակում ճնշողների ու ճնշվողների գոյակցություն։ Ընդհակառակը, նման վիճակը, երբ այլևս գոյություն չունի միասնական իմպերիալիստական սիստեմ, նպաստում է վերջիններիս հեղափոխական պայքարի հաջող ելքին։ Այս դեպքում պետք է ի նկատի առնել նաև Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների ոչ միայն բարոյա-քաղաքական, այլև ռազմական օգնությունը ազատագրական պայքարին։

Պայքարը թուլացնելու, նրա ներքին ուժերը ջլատելու համար կապիտալիստական գաղափարախոսությունը ջանքեր չի խնայում։ Բազմաթիվ քաղաքական գործիչներ, գիտության ասպարեզի աշխատողներ, ժուռնալիստներ ու պաշտոնյաներ ամեն կերպ փորձում են ապացուցել, որ ազատագրական պայքարը տվյալ երկրի ներքին զարգացման հետևանք չէ, այլ ներմուծված գաղափարախոսության արդյունք։ Այսպես, արևմտագերմանական մտավորականներից Ֆ. Շատտեն հիշյալ պրոցեսները բացատրում է նրանով, որ Արևմուտքը այս ասպարեզում թույլ է տալիս զգալի սխալներ, որոնցից օգտվում է Արևելքը, «իսկ սովետները օգտագործում են այս հանգամանքը»։ Ավելի խորանալով, նա Սովետական Միության հաջողությունները բացատրում է նրանով, որ մեր երկիրը «գործում է շատ աֆրիկացիների տնտեսական տեսակետներին համապատասխան»։ Հար և նման բազմաթիվ հայտարարությունները, հոդվածները, ճառերը և գրքերը չեն կարող ունենալ լուրջ ազդեցություն և չեն կարող փոխել արդեն բացարձակ ճշմարտություն դարձած պատմական օրինաչափությունը՝ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համաշխարհային հեղափոխական պրոցեսի անքակտելի բաղկացուցիչ մասն է կազմում։

Այնուհետև «Մեծ հոկտեմբերը և Ասիայի ժողովուրդների ազատագրական պայքարը» զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Ասիայի ժողովուրդների ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Բ. Գ. Գաֆուրովը։

Մանրամասնորեն լուսաբանելով Ասիայի առանձին երկրների վրա Հոկտեմբերի գաղափարների ազդեցության պրոբլեմը, նա ընդգծեց, որ կատարված քաղաքական և տնտեսական տեղաշարժերը, իրապես արմատական փոփոխություններ մտցրին միջազգային հիմնական ուժերի տեղադրման և փոխհարաբերությունների միջև։

Սոցիալիզմի համաշխարհային սիստեմը վերջնականապես դարձավ երկրագնդի բոլոր պրոցեսիվ ուժերի ձգողական կենտրոնը։ Ինչպես նշված է ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Հոկտեմբերյան հեղափոխության 50-ամյակի տոնակատարության մասին» որոշման մեջ, «համաշխարհային զարգացման վրա սոցիալիզմը ներգործում է նախ և առաջ իր դրական օրինակի ուժով»։ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի հսկայական տարածությունների վրա, տեղի է ունենում

սի վիթխարի կոիվ՝ պրոգրեսի, ազգային-ազատագրական պայքարի և սոցիալիզմի, մյուս կողմից ռեակցիայի, հարստահարման և իմպերիալիզմի ուժերի միջև։ Առաջինների հաղթանակին չեն կարող խանգարել ոչ գաղութատերերի ու ներքին ռեակցիայի մեքենայությունները, ոչ էլ պառակտիչ, ուլտրա-ձախակողմյան էլեմենտների քայքայիչ գործունեությունը։

«Մեծ հոկտեմբերի դերը Աֆրիկայի հակաիմպերիալիստական հեղափոխության մեջ» թեմայով կոնֆերանսում զեկուցեց ՍՍՀՄ ԳԱ Աֆրիկայի ինստիտուտի դիրեկտոր, ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Գ. Սոլոդովնիկովը։ Սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի համաշխարհային սիստեմի փորձը, նշեց նա, ունեցան մեծ ազդեցություն Աֆրիկայում սոցիալիստական գաղափարախոսության տարածման գործում։ Միջազգային նոր պայմանները ստեղծեցին հնարավորություններ աֆրիկական երկրներում գաղութատիրության վերացման և սոցիալական պրոգրեսի համար։

Աֆրիկայի ժողովուրդների պատմության մեջ սկսվեց նոր՝ քաղաքական անկախ գոյության դարաշրջան։ Սակայն դեռևս չեն վերացել իմպերիալիստական շահագործումը և տնտեսական կախյալ վիճակը, ինչպես նաև իմպերիալիստական տիրապետության վատթարագույն ձևը՝ ռասսայականությունը։ Սրանց ոչնչացումը աֆրիկական մայրցամաքում հակաիմպերիալիստական հեղափոխության երկրորդ էտապի կարևորագույն խնդիրներն են։ Ներկայումս Աֆրիկայի ժողովուրդները պայքարում են այդ խնդիրների իրագործման համար, քաղաքական այնպիսի բարդ պայմաններում, երբ Անգլիայի, Արևմտյան Գերմանիայի. Բելգիայի, Պորտուգալիայի և այլ երկրների իմպերիալիստական ուժերը, ԱՄՆ-ի գլխավորությամբ փորձում են ոչնչացնել Աֆրիկայի մի շարք երկրների առաջավոր ռեժիմները, քայքայել ժողովուրդների միասնական ճակատը և այդպիսով պահպանել իրենց տիրապետությունը։ Նեոգաղութատիրության այս քաղաքականությանը, եզրափակում է զեկուցողը, պետք է հակադրվեն սոցիալիստական երկրների, միջազգային բանվոր դասակարգի և ազատագրված ժողովուրդների համերաշխ ու միասնական գործողությունները։

ՍՍՀՄ ԳԱ Լատինական Ամերիկայի ինստիտուտի դիրեկտոր, տնտեսական գիտությունների դոկտոր Վ. Վ. Վոլսկու զեկուցումը նվիրված էր հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությանը Լատինական Ամերիկայի ժողովուրդների ազատագրական շարժումների վրա։ Այդ ազդեցության հետևանքով Ամերիկայի մայրցամաքում խորանում և լայնանում են ժողովրդական պայքարն ու ելույթները ԱՄՆ-ի իմպերիալիզմի և տեղական ռեակցիայի դեմ։ Այս տեսակետից, զեկուցողը, շարժման ներքին օրինաչափությունների տրամաբանական արդյունք է համարում Կուբայի հեղափոխությունը և սոցիալիստական բարեփոխումները Ազատության կղզում։ Նա նշում է միասնական ճակատի և համաձայնեցված գործունեությունների անհրաժեշտությունը Լատինական Ամերիկայի երկրների տարբեր խավերի մեջ և այդ ճակատի ստեղծման փորձերը բազմաթիվ վայրերում։

Այնուհետև կարդացվեցին զեկուցումներ ազատագրական շարժման մի շարք կարևոր ու կենսական պրոբլեմների շուրջ։ Համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, տնտ. գիտությունների դոկտոր Վ. Յա. Արոլտինը կանգ առավ ժամանակակից ազգային-ազատագրական հեղափոխությունների՝ սոցիալիստականի վերաճման խնդիրների վրա, միջազգային բանվորական շարժման ինստիտուտի բաժնի վարիչ, տնտ. դիտ. թեկնածու Ա. Ա. Կուցեննկովը՝ զարգացող երկրների բանվորական շարժումների հարցերի վրա, նույն ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, պատմ. գիտ. թեկնածու Լ. Պ. Դելյուսինի զեկուցումը նվիրված էր «Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցությանը՝ Չինաստանում հեղափոխական-դեմոկրատական պաղափարների զարգացման վրա» թեմային։ Գիտությունների ակադեմիայի Հեռավոր արևելքի ինստիտուտի աշխատակից, պատմ. գիտ. դոկտոր Գ. Բ. Աստաֆեր խոսեց Սովետական Միության՝ Չինաստանի հանդեպ տարվող քաղաքականության մասին։

Ընդհանուր խնդիրների մասին հիշյալ զեկուցումներից բացի, հոկտեմբերը և սովետական Արևելքի հանրապետությունների տնտեսական և կուլտուրական վերելքը ու ժողովուրդների բարեկամության ամրապնդումը թեմաներով հանդես եկան Լազախստանի, միջինասիական հանրապետությունների, Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ներկայացուցիչները։

Սովետական Հայաստանի պատգամավորությունը կազմված էր հինգ հոդուց. ակադեմիկոս Ա. Ա. Առաքելյան՝ ՀՍՍՀ ԳԱ էկոնոմիկայի ինստիտուտի դիրեկտոր, Հ. Գ. Ինճիկյան՝ արևելագիտության սեկտորի վարիչ, Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության հայկական կոմիտեի նախագահ, Ն. Հ. Հովհաննիսյան՝ նույն սեկտորի արաբագիտության բաժնի վարիչ, սովետա-արաբական բարեկամության ընկերության հայկական բաժանմունքի նախագահի տեղակալ, Հ. Մ. Նդանյան՝ սեկտորի իրանագիտական բաժնի վարիչ, համերաշխության հանրապետական կոմիտեի անդամ, Օ. Խուրդաջյան, նույն կոմիտեի քարտուղար։ Կոնֆերանսում, մեր պատ-

գամավորների անունից հանդես եկավ Ա. Առաքելյանը։ Իր զեկուցման մեջ, որը լսվում էր մեծ ուշադրությամբ, հատկապես արտասահմանյան հյուրերի կողմից (թարգմանություններ կատարվում էին ռուսերենից՝ անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և իսպաներեն լեզուների), նա կանգ առավ Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ հայ ժողովրդի վերածննդի և Սովետական Հայաստանի տնտեսության ու մշակույթի ծաղկման վրա, վառ փաստերով և համոզիչ օրինակներով զեկուցողը ցույց տվեց այն մեծ առաջընթացը, որ սպրում է Հայաստանը՝ սովետական կարգերի հաստատվելուց ի վեր։

Սովետական գիտնականների և քաղաքական գործիչների զեկուցումներին զուգընթաց տեղի էին ունենում արտասահմանյան հյուրերի ելույթները, որոնցում կոնկրետ վերլուծության հիման վրա ցույց էր տրվում մեծ Հոկտեմբերի ազդեցությունը առանձին երկրների հեղափոխական և ազգային-ազատագրական շարժումների վրա, ընդգծվում էին նրանց առանձնահատկությունները զարգացման տարբեր էտապներում։

Հարավային Վիետնամի ներկայացուցիչը բարձր գնահատական տվեց կոնֆերանսի աշխատանքներին, որը զգալի ներմուծում է իմպերիալիզմի ու գաղութատիրության դեմ պայքարող ժողովուրդների փորձի ընդհանրացման կարևոր գործում, Հոկտեմբերյան հեղափոխության գաղափարների լույսի տակ։ Նա ասաց, որ տնտեսական ու քաղաքական բարեփոխումները իր հայրենիքում կատարվում են հաշվի առնելով Սովետական Միության ու սոցիալիստական մյուս երկրների փորձը։ Այսպես են լուծվում ագրարային և ազգային հարցերը Վիետնամում։ Մեր օրինակով Վիետնամի ժողովուրդը փորձել է 1954—1959 թթ. խաղաղ ճանապարհով հասնել իշխանության գրավմանը։ Սակայն համոզվելով, որ այն իրականացնելը հնարավոր չէ, Հարավային Վիետնամի ազատագրման Ազգային ճակատը անցել է զինված պայքարի ներքին և արտաքին թշնամիների դեմ։ Մեծ են զոհերը, սակայն զգալի է պայքարի արդյունքը, մանավանդ երբ աճում է սոցիալիստական երկրների և առաջավոր մարդկության ռազմական, քաղաքական և բարոյական օգնությունը։

Մարոկկոյի կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար Ալի Յաթայի կարծիքով, Աֆրիկայի ազատագրման բարձր տեմպերը հետպատերազմյան տարիներին ուղղակի արդյունք են Հոկտեմբերյան հեղափոխության փորձի և սոցիալիզմի լագերի օգնության։

Հնդկաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ Սարդիսայը խոշորագույն նվաճում է համարում ոչ միայն գաղութային երկրների ազատագրումը, այլև մարքս-լենինյան գաղափարախոսության գործուն ազդեցությունը մարդկանց մտայնության վրա ամբողջ աշխարհում, մասնավորապես սովետական կարգերի գոյության 50 տարիների ընթացքում։ Սակայն նա նշում է, որ իմպերիալիզմը և ներքին ռեակցիան, ստեղծված պայմաններում դիմում են ծայրահեղ միջոցների, օգտագործում են առանձին խավերի ու ազգությունների միջև եղած հակասությունները, ուժեղացնում են տնտեսական ճնշումը։ Այս վիճակից ելքը հոետորը տեսնում է միասնական ճակատի ստեղծման մեջ՝ ձախ ուժերի և բուրժուազիայի պրոգրեսիվ էլեմենտների միջև։

Խալեդ Մոհի էդ-Դինը եգիպտական ժողովրդի շնորհակալությունն է հաղորդում Սովետական Միությանը անշահախնդիր, եղբայրական օգնության համար։ Խաղաղ գոյակցության քաղաքականությունը համարելով ազատագրված երկրների զարգացման կարևոր միջազգային գործոններից մեկը, նա այդ քաղաքականության գոյությունը համարում է մեր և մյուս սոցիալիստական երկրների, ազատագրական պայքարի և զարգացող երկրների տնտեսական ու քաղաքական հաջողությունների արդյունք։

Սոցիալիզմի գաղափարները, ասում է Բրազիլիայի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչ Ն. Վ. Սոդրեն, ներթափանցում են մանր-բուրժուական աշխատավոր մասսաների մեջ և ընդլայնում պրոլետարիատի ազդեցությունը, որը չափազանց կարևոր է տապալելու համար ԱՄՆ-ի մոնոպոլիաների և նրանց տեղական գործակալների տիրապետությունը։ Մոզամբիկի ազգային ճակատի քարտուղար Մ. Դոս Սանտոսը պատմում է, թե ինչպիսի պայմաններում է ընթանում զինված պայքարը գաղութատիրության հատուկենտ մնացած որոշ բազաներում, թե ինչ ոգևորություն է պատճառում Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների ռազմական օգնությունը, ազատագրական բանակի մարտիկներին, ամրապնդում է միասնությունը և հաղթելու կամքը։ Իսրայելի կնեսետի դեպուտատ Էմիլ Հարիրին խոսեց այն մասին, թե ինչպես միջազգային պրոգրեսիվ ուժերի և մասնավորապես Սովետական Միության հետևողական քաղաքականությունը օգնում է կոմունիստներին պայքարելու իր երկրի տիրող շրջանների սանձազերծած ագրեսիվ պատերազմի և նրա հետևանքների դեմ։ Հարավային Աֆրիկայի քաղաքական

գործիչ Ջո Զուլուն խոսելով ռասիստների բարբարոս քաղաքականության մասին, ընդգծեց, որ Հոկտեմբերյան հեղափոխությունը և ազատագրական պայքարի հաջողությունները ցույց են տալիս, որ գաղութատիրության, ռասսայականության, նրանց բոլոր տարատեսակների հիմքերը վերացված են և նրանց վերջնական ոչնչացումը միայն ժամանակի խնդիր է։ Այդ հույսը թևավորում է անասելի ծանր պայմաններում ապրող և պայքարող իր հայրենիքի մարտիկներին։

Իրանի հասարակական գործիչ Թաֆազդոլիի ճառը նվիրված էր երկրում կատարվող բարեփոխություններին, այսպես կոչված «սպիտակ», անարյուն հեղափոխությանը։ Միաժամանակ նա նշեց, որ Սովետական Միության բարեկամական քաղաքականությունը հաճախ է օգնել Իրանին լուծելու իրեն համար կենսական նշանակություն ունեցող հարցերը, պլանավորելու տնտեսությունը, ստեղծելու արդյունաբերական մի շարք ձեռնարկություններ, հիդրոտեխնիկական օբյեկտներ։ Փորձը ցույց է տալիս, ասում է նա, որ Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների հետ ստեղծված կապը, համագործակցությունը և տնտեսական փոխանակությունը տալիս են լավ, օգտակար արդյունքներ.

Խոսելով նախկին գաղութային երկրների կանանց համար ազատագրական պայքարի բարեբեր հետևանքների մասին, Սոմալիի կանանց կոմիտեի նախագահ Ֆաթմա Հաջ Օսմանը կանգ է առնում տեղական ռեակցիոն ուժերի և իմպերիալիստական պետությունների չլատիչ գործունեության վրա և հայտնում է իր համոզմունքը, որ ազատագրական շարժումների արդյունքների մեծ մասը զերծ կմնա գաղութատերերի դավերից, քանի որ այդ շարժումները Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած պայմանների արգասիքն են։

Ասիայի և Աֆրիկայի երկրների համերաշխության կազմակերպության գլխավոր քարտուղար Յուսեֆ էս-Սիբաին հույս հայտնեց, որ Բաքվի կոնֆերանսը և նրա մասնակիցների աշխատանքը կօգնեն ամրապնդելու հիշյալ կազմակերպությանը, ընդլայնելու նրա ազդեցությունը Ասիայում և Աֆրիկայում։

Ամփոփելով կոնֆերանսի աշխատանքները, կազմկոմիտեի նախագահ Վ. Յու. Ախունդովը նշեց, որ նրա հաջող ընթացքը պայմանավորված էր նախ քննարկվող պրոբլեմի՝ մեր ժամանակների համար չափազանց հրատապ ու ակտուալ լինելու հանգամանքով։ Երկրորդ, նրանով, որ կոնֆերանսին մասնակցում էին խոշոր հասարակական-քաղաքական գործիչներ ու գիտնականներ։ Ընդհանուր առմամբ այն կարևոր փուլ հանդիսացավ Հոկտեմբերյան հեղափոխության համաշխարհային նշանակությունը ամփոփելու կարևոր գործում։ Կոնֆերանսին մասնակցող արտասահմանյան հյուրերի հանդիպումները սովետական գիտնականների և գործիչների հետ ծառայեցին նաև ժողովուրդների հետագա մերձեցման և բարեկամության ամրապնդմանը։

Հ. ԻՆՃԻԿՅԱՆ